Շուշաննա Թևանյան

ԱՍՀՆ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության փորձագետ

25.05.2022թ.

Եռամսյակային հաշվետվություն

Հաշվետվության հասցեատեր

Հաշվետվությունը կներկայացվի ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ Հայկ Մուրադյանին՝ գնահատման նպատակով:

Հաշվետվության ուշացման պատճառ

Հաշվետվությունը ներկայացվում է մեկուկես ամիս ուշ՝ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Հաշվետվության նպատակ

Այս հաշվետվությունը նպատակ ունի՝ հասցեատիրոջն ամփոփ և թափանցիկ կերպով ներկայացնելու իմ՝ որպես մոնիթորինգի և գնահատման փորձագետի կատարած աշխատանքի և ստացած արդյունքների մասին տեղեկատվությունը:

Հաշվետվության կառուցվածք

Փաստաթուղթը Աղյուսակ 1-ի տեսքով ներկայացնում է աշխատանքի անցնելուն հաջորդող երեք ամսիների ընթացքում արված աշխատանքների հիմնական ուղղությունները, ձեռնարկված գործողությունները և դրանց արդյունքները: Հաշվետվության վերջում համեմատականներ կտարվեն կատարված աշխատանքների և աշխատանքի նկարագրով սահմանված պարտականությունների միջև:

Աղյուսակ 1

Հ/Հ	Ուղղություն	Գործողություն	Արդյունք
1	**Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի գնահատում (SPAP II)**	**1.1.** Ծանոթացել եմ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Ազգային ինստիտուտի ջանքերով 2018թ.-ին իրականացված Ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացի գնահատման զեկույցին, արդյունքային շրջանակին, մեթոդաբանությանը, հարցաշարերին, ընտրանքի նկարագրությանը և այլ փաստաթղթերի:	**1.1.** Քանի որ ՅՈՒՆԻՍԵՖԻ և Ազգային ինստիտուտի 2018թ.-ի զեկույցը հենակետային է SPAP II ծրագրի տարեվերջյան գնահատման համար, հաջողվել է հավաքել և համակարգել զեկույցի վերաբերյալ բոլոր հայալեզու և անգլալեզու փաստաթղթերը հետագա աշխատանքները հեշտացնելու համար: **1.2.** Շահագրգիռ կողմերի հետ տարված աշխատանքի արդյունքում

		1.2. SPAP II ծրագրի տարեվերջյան գնահատման համար աշխատել եմ ցուցանիշների ցանկի պատրաստման վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2018թ. զեկույցի հիման վրա: **1.3.** Համաշխարհային բանկի՝ Հայաստան կատարված մայիսյան առաքելության ընթացքում պարբերաբար տվել եմ զեկուցումներ՝ ցուցանիշների մշակման աշխատանքների վերաբերյալ: **1.4.** SPAP II-ի գնահատման գործողությունների շրջանակում մասնակցել եմ որակական հետազոտությունների համար օգտագործվելիք հարցաշարերի, ընտրանքի վերանայման աշխատանքներին, ինչպես նաև տվյալների հավաքագրման նպատակով խորհրդատու վարձելու տեխնիկական առաջադրանքի մշակմանը:	թարմացվել է 144 ցուցանիշ, որոնք ներկայացվել են փոխնախարարների հաստատմանը: **1.3.** Համագործակցային մթնոլորտ է ձևավորվել իմ և Համաշխարհային բանկի թիմի միջև, ինչը հնարավորություն կտա հնարավորինս հարթ կազմակերպել SPAP II-ի տարեվերջյան գնահատումը: **1.4.** Աշխատանքները դեռ ընթացքի մեջ են. արդյունքը կարձանագրվի հունիսի կեսերին:
2	**ՄԳ նոր համակարգի ներդրում**	**2.1.** Ծանոթացել եմ SPAP II ծրագրի շրջանակներում Ազգային ինստիտուտի և Վարչության մասնակցությամբ՝ խորհրդատվական երկու ընկերությունների մշակած հաշվետվությունների, մոնիթորինգային ցուցանիշների, որակական մեթոդաբանության և ծախսարդյունավետության գնահատումների փաթեթին: **2.2.** Աշխատել եմ «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ռազմավարական ուղղությունների առաջարկ» փաստաթղթի վրա, որը Համաշխարհային բանկի փետրվարյան առաքելության ընթացքում նախարարության ստանձնած հանձնառություն էր:	**2.1.** Վերադասի, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ համաձայնության ենք եկել, որ փաթեթը, չնայած մի շարք բացթողումների, կարող է հիմք ծառայել նոր ՄԳ համակարգի վերջնական մշակման և ներդրման համար: **2.2.** Վերադասի և այլ շահագրգիռ կողմերի հետ ունեցած քննարկումների արդյունքում ռազմավարական ուղղությունների մասին առաջարկը կազմվել է և ներկայացվել փոխնախարարներին, SPAP-ի գրասենյակին և Համաշխարհային բանկի թիմին:

		2.3. Մոնիթորինգի և գնահատման մասով աշխատել եմ Համաշխարհային բանկին ուղղված SPAP II ծրագրի վերջնաժամկետի երկարաձգման նամակի խմբագրման վրա: **2.4.** Սեփական նախաձեռնությամբ աշխատել եմ մոնիթորինգի եվ գնահատման համակարգի մասով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա:	**2.3.** SPAP-ի գրասենյակի հետ ունեցած քննարկման արդյունքում հաջողվեց համոզել խուսափել «ՄԳ նոր համակարգը ներդված է» միտքը նամակի մեջ զետեղելուց, քանի որ փաստն այն է, որ համակարգը ներդրված չէ, ավելին՝ նախորդ տարիներին երկու խորհրդատուների կատարած աշխատանքն ինչ-ինչ պատճառներով չի օգտագործվում: **2.4.** Աշխատանքները դեռ շարունակվում են, և հունիսի սկզբին փոքր զեկույց կներկայացվի վերադասին և այլ շահագրգիռ կողմերին:
3	**2022թ. ուսումնասիրությունների եվ մոնիթորինգի հարցաշարերը եվ ժամանակացույցը հաստատելու մասին նախարարի հրամանի նախագծի խմբագրում**	**3.1.** Աշխատել եմ հրամանի նախագծի թարմացման վրա, մասնավորապես՝ մեթոդաբանության և ընտրանքի հստակեցման: Հանդիպումներ եմ ունեցել Վարչության աշխտանակիցների, վերադասի, փոխնախարարների, գլխավոր քարտուղարի, այլ ոլորտային վարչությունների հետ՝ հասկանալու նրանց կարիքները և հաշտեցնելու դիրքորոշումները՝ հնարավորինս բարելավված որակի փաստաթուղթ ստանալու համար: **3.2.** Ծանոթացել եմ Մոնիթորինգի և գնահատման բաժնի տրամադրած տեղեկանքներին՝ իրավակիրառ պրակտիկայի մշտադիտարկման մասով, ինչպես նաև Վարչության 2021թ. կատարած աշխատանքների և իրականացրած ուսումնասիրությունների հաշվետվությանը:	**3.1.** Ոլորտային վարչությունների հետ քննարկումների արդյունքում հստակեցվել է պետական դրամաշնորհով աշխատող և մշտադիտարկման ենթակա կազմակերպությունների ցանկը: Հստակեցվել է մշտադիտարկման ենթակա Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) տարածքային կենտրոններ ընտրելու սկզբունքը, և գրություն է ուղարկվել Միասնական սոցիալական ծառայություն՝ այդ սկզբունքի հիման վրա կենտրոնների ցանկ ներկայացնելու խնդրանքով: Պատասխանն ստանալուն պես հրամանի վերջնական նախագիծը կներկայացվի վերադասին, գլխավոր քարտուղարին և փոխնախարարներին: **3.2.** Փաստաթղթերը հնարավորություն են տվել հասկանալու՝ ինչպես է բաժինը աշխատում, մասնավորապես՝ ինչպիսի մոտեցում է օգտագործում իրավակիրառ պրակտիկայի մշտադիտարկման աշխատանքներում: Սա առավել հեշտացրել է հրամանի խմբագրման աշխատանքը:

4	**Աշխատանքի եվ սոցիալական պաշտպանության համապարփակ ռազմավարության մշակում**	**4.1.** Մասնակցել եմ Համապարփակ ռազմավարության արդյունքային շրջանակի ցուցանիշներ սահմանելու աշխատանքներին՝ ոլորտային վարչությունների և խորհրդատու կազմակերպությունների հետ. նախարարի խորհրդական Վիկտորյա Այդինյանի հետ աշխատել եմ նաև արդյունքային շրջանակը ամբողջապես լրացնելու վրա:	**4.1.** Համապարփակ ռազմավարության արդյունաքային շրջանակն ամբողջովին կազմված է և դրված ներքին շրջանառության. մոտ 129 ցուցանիշներ թարմացվել են, նշվել են դրանց հենակետային և թիրախային արժեքները, տվյալների հավաքագրման աղբյուրները, հաճախականությունը, մեթոդները եվ պատասխանատու կառույցները: Այս աշխատանքների արդյունքում հավաքված ամբողջ տեղեկատվությունը համակարգված ձևով հավաքվել է մեկ փաթեթում և պահվել՝ հետագայում փոխանցման նպատակով:
5	**Անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների գործունեության մշտադիտարկման իրականացման կարգը հաստատելու մասին հրամանի նախագծի խմբագրում**	**4.1.** Աշխատել հրամանի խմբագրման վրա՝ Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի հետ համատեղ:	**4.1.** Հաջողվեց հրամանը առավել կառուցվածքային ու հստակ դարձնել՝ մեթոդաբանության և ընտրանքի առումով՝ խուսափելով Վարչության համար անիրատեսական պարտականություններ ամրագրելուց:
6	**Այլ ուղղություններ**	**5.1.** Նախարարի գրասենյակի հետ աշխատել եմ նախարարի ելույթի տեքստի խմբագրման վրա՝ «Raisina Dialogue 2022» միջոցառման համար:	**5.1.** Ելույթը ժամանակին տրամադրվել է նախարարին:
7		**5.2.** Նախարարի գրասենյակին աջակցել եմ տարբեր տվյալների ու տեղեկատվության վիզուալիզացիա աշխատանքներում:	**5.2.** Պահանջվող տեղեկատվությունն (ռիսկերի մատրիցա, զեկույցներ և այլն) առավել հստակ եվ ակնահաճո տեսք է ստացել:

Աշխատանքային նկարագրի եվ կատարված աշխատանքների համապատասխանություն

Ըստ աշխատանքի նկարագրի՝ իմ հիմնական պարտականությունը մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանության լրամշակման աշխատանքներին մասնակցությունն է: Առաջին երեք ամիսների ընթացքում այս ուղղությամբ զգալի աշխատանքների մեջ չեմ ներգրավվել, ինչն իմ ընկալմամբ պայմանավորված է եղել մոնիթորինգի և գնահատման համակարգի մշակման և ներդրման ձևի և սկզբունքների շուրջ գոյություն ունեցող տարաձայնություններով վերադասների տարբեր օղակների միջև: Այս ուղղությամբ տեղի ունեցած գրեթե բոլոր քննարկումներին

մասնակցել եմ և ներկայացրել իմ առաջարկությունները: Միջազգային փորձի ուսումնասիրության զեկույցը ևս միջոց կլինի՝ ներդրում ունենալու այս խրթին գործընթացում: Աշխատանքի նկարագիրը սահմանում է նաև այլ ընթացիկ պարտականություններ, որոնք, ինչպես երևում է աղյուսակից, իրականացրել եմ:

Խնդրանք վերադասին

Խնդրում եմ առավել մեծ վստահություն ցուցաբերել և ներգրավել ինձ ինչպես մեթոդաբանության լրամշակման աշխատանքներում, այնպես էլ վարչության այլ ընթացիկ գործերում: